



ՎԵՆԵՏԱԼԱՅ

ԺԴ

(Տես յ'էջ 145)



ՆՏՈՆԻ մուսորական կամ բարոյական յիշատակներէն վերջը՝ արժան է յիշել և բնական կամ կենդանական թողած յիշատակն ալ, որ է որդին Յովսէփ, իր հօրն մականուամբ կոչուած, և հաւանօրէն անդրանիկն։ Սա ալ Անտոնի մահուանէն վերջը 40 տարի յիշուի, և նոյն արուեստանոցին մէջ, այսինքն Նաւարանին, գործաւոր եղած է, իբրեւ հիւան (marangon), և յետոյ գլխաւոր կամ գործապետ հիւանց (Capo-Opera de' marangoni). և եթէ հօրը բոլոր ճարտարութիւնը չէ ունեցեր, սակայն բաւական ալ ունեցեր էր, հանդերձ անոր զովելի բարբոյլ և պատուով ինչպէս յայտնուի նոյն Նաւարանին և այլոց պաշտօնէից վկայութեամբք և Դրբսին տուած շնորհներով։ Իսկ մեզի համար աւելի զովելի և երախտաւոր է՝ իր աղբրսագրաց մէջ հօրն ըրած արդիւնաւոր գործերը համարձակ յիշեցընել տալով, նախ վերնետեղ սէրութեան գլուխներուն, և ապա մեզի։ Իր տարիքը յիշեցինք ի սկզբան. հօրը վախճանած ատեն իբրեւ 15 տարուան պատանի մ'է. և հաւանօրէն անոր ձեռաց տակ մտած է ի Նաւարան և ըսկըսած վարժիչ հիւանութեան. թէ տարիքի անկատարութեան, թէ հօրը կերպով մի տարածամ մեռնելուն (քիչ օրուան հիւանութեամբ) չէ կրցած ժառանգել անոր հնարագիտութիւնը և գաղտնիքները։ Դիւանաց մէջ առաջին անգամ 1607ին կը գտնեմ Յովսէփայ յիշատակը, իր 30 ամեայ ե.

դած ատեն, ուսկից կ'իմացուի, որ Տիմոյ Կանցոյ անուամբ Կորկիրացւոյ մի (Գորֆու) աղջիկը՝ Գիարա կամ Գիարեդաս (Պայծառ, Պայծառիկ) կին առեր է, գուցէ ազգաւ յոյն կամ վենետայոյն։ և բաւական տարի առաջ կարգուած պիտի ըլլան, որովհետեւ 1609ին շորս զաւակ ունէին։ Կարգուելուն առաջ հարսն իբրեւ օծիտ տուած է Յովսեփայ 50 զովկատի արժէք տան կահ կարասիք։ անկէ զատ իր հայրենական և մայրենական ժառանգութեամբ երկիր և ստացուածք ունէր ի կղզին (Գորֆու), և բոլորն ալ յանձնէր է իր փեսային, որ ինչպէս ուզէ՝ տնտեսէ կամ ծախէ, և բոլորն ալ իր օծիտն համարուի։ բայց ըստ օրինաց վէնետկոյ՝ պարտական ըլլայ Յովսէփ՝ ի հարկին՝ զարձնելու անոնց պինը առ կինն։ Այս բանս նոտարի առջեւ երկուքն ալ հաստատեցին (13 փետր. 1607). վկայ եղան երկու Կորկիրացիք։ Տարի մի վերջը (4 յունիսի, 1608) Յովսէփ նորէն նոտարին առջեւ վկայեց որ իր կնոյմէ առած է 150 զովկատ արժէք ինչք և զարդք՝ և անոր Գորֆուի ստացուածքներէն եկամուտ։ և կը խոստանայ այդ երկու գումարին (200 զովկ.) փոխարէն զնեւ իր յատուկ ստացուածքը, և հաստացանել եթէ պէտք ըլլայ։

Եթէ Յովսէփ հօրը աղքատութեան ժամանակ որք մնաց, կ'երեւի թէ բաւական ունեւոր կենակից մի գտաւ. սակայն իր ընտանեաց համար ոչ անկէց առած օծիտը և ոչ իր հիւանական աշխատութեան վարձքը բաւական համարէր չափաւոր բարեկեցութեան. ուստի այս իր վերջին խոստմանէն տարի մի ետքը (1609, օգոստ. 19) աղերս տուաւ առ Գուքան, մի առ մի յիշեցունելով իր հօրը արդինքը և ճարտարութիւնը, 40 տարի տէրութեան ժառանգութեան մէջ, և խնդրելով որ թոշակն՝ որ էր օրական 42 փող (soldi) անեցուի, և տրուի 3 լիւրա։ Ըստ պատուիրանի Երեւակոտին հոգողք և զլիաւորք Նաւարանի՝ քննելով վկայեցին (ի 18 յանուարի, 1610) որ Յովսէփ իր արուեստին մէջ շատ յաջող է (molto sufficiente nella sua professione), և տէրութեան բազմերախտ անձի մի զաւակ ըլլալով արժանի է շնորհաց։ Չեմ գիտեր ինչ պատճառի համար այս խնդիրս և վկայութիւնն ութ անգամ կրկնուած է երեք տարուան միջոց, բայց վերջի անգամ (12 դեկտ. 1613) Երեւակոյսն Յովսեփայ 42 փող օրավարձի վրայ՝ անեցընելով 8 փող ալ, այնպիսի փառաւոր վկայութիւն կու տայ իր գերազոյն վճռով՝ անոր հօր արժանաւորութեան, որ անգին կրընայ բռնիլ. « Հայ կոչուած Սուրբան Անտոնի՝ մեր տէրութեան երկար և պտղաբեր ծառայութեան համար՝ » ի տան Նաւարանի, և իբրեւ ճարտարապետ, բաց ուրիշ իրեն լաւ գործերէն՝ 1563ին հնարած ըլլալով ընկզմած Խալէոնը հանելու համար շինած արկղաձեւերը, որով նառահանգստիսն աճեալս օգուտ եղաւ, և այն ալ իր յատուկ ծախքով, և վերջի Նաւամարտին մէջ հրետները մեծամեծ խալէից կողերուն յարմարընելով, ի գարման ամենեկոյն, և ամէն հասարակաց օգտի գործոց մէջ միշտ եղական պարտաստականութիւն ցուցնելով. և իր որդւոյ Յովսեփայ փութալան և հաւատարիմ ծառայութեան

» համար՝ իբրեւ հիւան ի Նաւարանի, իր աշխատութեան օրերու թոշակն » ըլլայ 50 փող », և այլն: (1)

Յովսէփայ կարօտութեանն բաւական չեղաւ այս յաւելուած թոշակին. երկու տարի վերջը (18 մայիս, 1615) նոր աղերսագրով մի խնդրեց որ իրեն ամսական 5 զուկատ (աւելի) տրուի բոլոր կենաց մէջ, ի շնորհս երախտեաց հօրը, նաև իր յատուկ աշխատութեանց, որոց մէջ կը յիշէ որ հիմայ կարող էր նաւեր և խալէներ ալ շինել. այս բանիս կը վկայեն Նաւարանի գլխաւորքն ալ. (nel fabricar in questa Casa (dell'Arsenale) Galee con molta sufficienza.) և գովութեամբ արծանի կը համարին իր խընդրածին (5 յունիս): Նոյնպէս և հոգցողք Հրազիմուց (Proveditori d'Artellerie) (16 օգոստ. 1612), թէ ոչ միայն հայրն՝ այլ և ինքն Յովսէփ կարող և յաջող անձն է, իր յատուկ գիտով խալէներ շինելու (2), և կը յուսացուի իրմէ միշտ լաւ ծառայութիւն (3). անոր համար արծանի է շնորհաց: Ի վերայ այս վկայութեանց Շերակոյտն վճռեց ի 6 յունիսի, 1620 (հաւանութն և առաջ ալ) որ Յովսէփայ թոշակին վրայ աւելցուի ամսական 3 զուկատ ալ բոլոր կենաց մէջ:

Տասն տարի վերջը Յովսէփ նոր և վերջին աղերսագիր մ'ալ տուած է (7 մայիս, 1629), որոյ մէջ կ'իմացընէ՝ որ իր հօր պէս 40 տարի տէրուութեան ծառայութեան մէջ է, նախ նաւերու մէջ, յետոյ Նաւարանին մէջ իբրեւ հիւան, և 25 տարիէ վեր հիւսանց գլխաւոր կամ գործաւար, որոց վրայ շատ հոգով և տառապանօք կը հսկէ՝ որ տէրութեան փնաւ չըլլայ անխնայութեամբ. շատ նաւերու և խալէից շինութեան մասնակից էր, զոմանքս ալ իր յատուկ ոճով. Նաւարանի տեսչաց հրամանաւ գացեր և հինգ տարի կեցեր էր ի Կորկիւրտ (ուսկից հիմայ վեց ամիս է որ զարձեր էր), անկից նաւաց շինութեան համար անկիւնաձեւ փայտեր բերելու (Stortami), և այն աստիճանի շատ բերեւ էր՝ որչափ ոչ ճշ իրմէ առաջ, որ և ոչ միայն

1. Per la lunga et fruttuosa servitù prestato alla Sig. V. da Antonio Suriano detto Armeno, nella Casa d'Arsenale, et Ingegnere; havendo fra le altre buone operationi sue l'anno 1563 cavati li cassoni che furono fondati per cavar il Galeone; con servitio infinito del Porto, et con sua spese particolare; et nella ultima battaglia navale accomodata l'artiglieria alla banda delle galee grosse, con meraviglia d'ogn'uno; essendo sempre con singolar prontezza l'opera sua in tutte le occasioni di publico servitio, come dalla Scrittura hora letta ha questo Consiglio inteso; Et per la diligente et fedel servitù che Iseppo Suriano figliolo che fù del sudetto Antonio, presta nella Casa dell'Arsenale, come Marangon di detta Casa; Siano. accresciuti al detto Iseppo Soldi otto al giorno lavorante, alli 42 che ha al presente...

2. E ancor lui persona sufficiente et di valore, fabricando Galee di suo proprio sesto.

3. Et si può da lui promettere in ogni tempo di ricever buon servitio.

20 խալէից շինութեան բաւեց, այլ և շատ ալ աւելցաւ. այն կղզին եւ զած ատեն՝ բերդին համար շատ կարեւոր գործեր տեսաւ⁽¹⁾. ուրիշ գործերէ զատ՝ նաւահանգըստին ծոցը (mandracchio) ընկղմած արսիչ մ'ալ հանեց: Այս ամէն աշխատալի գործոցն համար վկայականներ ունէր. որով համար ձեռք կը խնդրէր որ դարձեալ թռչակին վրայ աւելցուի օրական լիւրս մի, և իր աստիճանի արուեստակցաց նման իրեն ալ տրուի հասարակ աշխատաւոր կամ ծառայ մի (il Fante grosso) ինչպէս ուրիշ գործավարք ունէին առանց իրեն չափ արդիւնք ունենալու: Այս ամէն բանին երդմամբ վկայեցին հաւարանին գլխաւորքն (19 յուլ.) ոչ միայն իր հաւատարմութիւնը և 40 տարուան փութաշան աշխատութիւնը գովելով, այլ և սովորական վեր կարողութիւնը (sua non ordinaria sufficienza). մասնաւորապէս ի կորիկուրա ըրած գործը, շատ հեղ լուանգաւ կենաց՝ յայլազգեաց հակառակութենէ. շատ մեծ ծառայութիւն՝ զոր երբէք անկէ առաջ մէկն չէր կըրցած ընել⁽²⁾: Կը յիշեն նաև ոչ միայն արսիլը հանելը, այլ և իր ծախուք հանելը. նոյնպէս ուրիշ նաւ մ'ալ (Berton Foscolo) որ ալեկոծութեամբ ի ցամաք ընկեր էր. և այս ամէն բանի մեծ և կարգէ դուրս գովութեամբ վկայականներ ունենալն ի պաշտօնէից⁽³⁾: Յայտնի է այս վկայութեանց վերջաբանն, որ արժանի շնորհաց կը համարէին զՅովսէփ. իսկ տէրութիւնն որ ոչ երբէք կը զլանար շնորհքը, այլ կը չափաւորէր, այս անգամ ալ փոխանակ աղերսողին խնդրած օրական լիւրայի մի՝ աւելցուց անոր 48 փող թռչակին վրայ՝ 6 փող ալ, որպէս զի կ'ըսէ վճիռն (ի 22 մարտի, 1630), հանգիստ և միթարուած սրտով այսուհետեւ ալ նոյն եռանդեամբ շարունակէ իր փութաշան և օգտաւէտ ծառայութիւնը:

Հաջիկ վեց ամիս կրրցեր է Յովսէփ վայլել իր աւելցած թռչակը. նոյն տարին ալ (1630) ի վճենտիկ արաւոր սրածութիւն մ'եղաւ, ինչպէս իր ծրնած տարին. կ'երեւի թէ ինքն ալ բռնուելով այս ժանտախտէն՝ տէրութեան կարգադրած զգուշութեան հրամանին համեմատ՝ ի զգուշարանն (lazareto) խաւրուր է, ուր վեցօրեայ զխնայաւոր վախճաններ է, 54 տարուան⁽⁴⁾, ի 29 հոկտեմբերի. իսկ իր բնակութեան տեղն է եղեր ի մեծ Թաղին Ս. Պետրոսի որ և Բերլի թաղ կ'ըսուի (Castello), Սիւնեբու անուանեալ փողքը հրապարակաձև տեղը (Calle delle colonne).

Յովսէփայ կենաց և գործոց վերոյգրեալ յիշատակներէն զատ՝ մէկ մ'ալ

1. Sendomi adoperato in molti altri importantissimi convenienti a quella fortezza.

2. Servizio veramente di somma rilevanza, d'altri ne'tempi passati non saputo eseguire di gran lunga.

3. Da publici Rappresentanti ha ottenuto Attestati che sommamente decantano il suo merito, con straordinaria commendatione sue.

4. 29 Ottobre, 1630. Ser Iseppo da Antonio Armenio, anni 54. Doglia di testa già sei giorni. In Calle delle Colonne. Lazareto,

ծանօթ է ի նօտարական Դիւանս (Leonello Geronimo նօտարի), յամի 1622—3. Նաւարանի հիւանց գործաւարի երկրորդ մի, (Vice Capo d'Opera de' Marangoni) պարտական ըլլալով Յովսեփայ, նախ ի 22 յոկտ. 1622, յետոյ և ի 27 մայիսի, 1623, նօտարի առջև խօստանայ և գրեւ կու տայ, որ իր պարտատէրն (Յովսեփ) ըլլայ իր գործակալն կամ երեսփոխան, և ընդունի ինչուան տարի մի և 2 ամիս՝ իր առնելիքները, որ էին 2 դուկատ ի նաւարանէն, դուկատ մի և 18 փող ուրիշ պաշտօնարանէ, չափ մ'ալ ալիւր ամսական, և ասոնցմով վճարի պարտքն:

Այս երկու ազգայնոց իրարու արծանաւոր հօր և որդւոյ (Անտոնի և Յովսեփայ) զովելի և յիշատակելի գործունէութիւնն, վերոյ նշանակեալ թուականներէն յայտ է՝ որ անընդհատ 80 տարի տեւած է վէնետիկ պետութեան և քաղաքին ամենէն կարեւոր, զօրաւոր և շահաբեր գործանոցին մէջ, որ է Նաւարանն, որոյ հետ անբաժան իմանալու է Զինարանն ալ, ինչպէս որ Arsenale կոչուալ ալ կ'իմացունէ. յայտ ալ եղաւ կարծեմ, որ բաւական պարծանք և յիշելիք մի կրնար ըլլալ իր ազգայնոց, ներկայից և ապագայից. յուսալի էր որ աւելի երկարատեւ յայտնուէր այնպիսի գործունէութիւնն իրենց ցեղին յաջորդութեամբ, թէ և հայութիւնն ըստ լեզուի և կրօնի յիտալութիւն փոխուած ըլլայ: Անտոն 6 որդի որք թողած էր, մէկ մ'ալ իր մէ քիչ առաջ մեռած. Յովսեփ յիշեց իր 4 զաւակներն՝ յամին 1609. բայց անկէ ետեւ ալ որդի ունենալն յայտնի է. շատ հաւանական է թէ իր եղբարց և որդւոց ոմանք՝ իրենց նման Նաւարանի գործաւորք եղած ըլլան, և թերեւս քանի մի ազգ ալ, այսինքն որդւոց որդի յառաջ եկած ըլլան, և ժամանակաւ եթէ ցեղն ալ ջնջուած չէ, այլ իրենց նախահօր Սուրիան մահկանանն ջնջուած ըլլայ, թէ և Սուրիան մահկանաւոր եղած են վէնետիկ ցիւր և ազնուականք ալ, բայց ուրիշ ծագմամբ: Միայն մէկ մի ծանօթ է մեր Հայոյն ցեղէն, և իր յատուկ թոռն, Յովսեփայ որդին, որ և իրենց արուեստը բաներ է ի Նաւարանի, և քառորդ դար մ'ալ շարունակեր է անոնց գործը. բայց ո՞րքան յաջողութեամբ և ինչ տեսակ, անծանօթ է ի մահուան թուականէն (1655) յայտ է որ Յովսեփայ սալինեկ որդիքներէն չէ սա (1), այլ 1622ին (ապրիլի 14ին՝ մկրտուած) և անուանած Ֆրանչեսկոյ—Մատրեոս—Անտոն, կնքահայրն ալ եղած է Նաւարանի հիւանց համա-

1. Բաւական հաւանական կ'երեւի որ այս առջինեկներէն մէկն էր Նաւարանի հիւան Գեորգ ալ, որ կ'ըսուի որդի Հայոյն Յովսեփայ, (de Iseppo dell'Armeno). Բայց դիտելի է որ սա 1618ին զաւակ ունէր յօրինաւոր կնոջէ (Եղիսաբեթէ) և կնքէր (20 յունիսի) Յովհանն—Պօղոս—Անճելոյ անուամբ, ըսել է իր Ֆրանչեսկոյի (Եթէ իր եղբայրն է) ծնանելէն չորս տարի առաջ. և հարկ է որ թէ ինքն (Գեորգ) և թէ Յովսեփ (Եթէ իր հայրն է) իրբեւ 20 տարեկան կամ ալ աւելի նորահասակ կարգուած ըլլան: Եթէ այսպէս է՝ մեր Հայուն (Անտոնի) ցեղն մէկ աստիճան մ'ալ կ'երկըննայ:

բակալի պէս գլխաւոր մի (Proto), Պետրոս անուամբ⁽¹⁾։ Այս է մեր Հայուն թողան բողոր մեզի ծանօթ յիշատակն ծննդեան և մահուանն որ իր կենաց ՅՅդ տարին հանդիպած է, սեպտ. 14ին (1655). Բայց մեռելազը ըրց նշանակածէն⁽²⁾ կ'իմացուի ոչ միայն մինչեւ վերջը Նաւարանի մէջ հիւսըն ըլլալն, այլ և ամուսնացեալ ըլլալն, և բաւական ազնուական կին մ'ուսնեալն Անդրէանա անուամբ, որովհետեւ կոչուի (Madonna Andreana), և իր ծախուք թաղել տուեր է այրիկը. և ասոր ութօրեայ անընդհատ ջերմի հիւանդութեան ատեն ալ՝ երկու բժիշկք եկած են զինքը նայելու։ Նոյն ինքն Ֆրանչեսքոյ ալ պատուով Messer կոչուած է և ոչ Ser (որ ստորին կարգի մարդկան մակդիր է)։ Բնակութեան տեղն ալ թէպէտ նոյն հօրը բնակած թաղին մէջ է, բայց օւրիշ կողմ։ Այս ամեն նշաններէն գուշակուի ալ որ Հայոյն թրուն՝ անկէ և իր որդիէն ալ աւելի բարեկեցիկ եղած ըլլայ, գոնէ կենաց վերջերը, և հաճելի է թէ իր աշխատութեամբ և ճարտարութեամբ վաստակած ըլլայ բարեկեցութիւնը՝ քան ժողանդութեամբ։

ՆԿԱՐԱԳԻՐ ՆԱԽԻՋԵԻԱՆԻ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԳՈՐԾԱՏՈՒՆՔ, ԱՐՈՒԵՍՏԱՆՈՑՔ, ԱՐՈՒԵՍՔ.

ԵՐ ԳԱՃԱՆԱԿԱՆՈՒԹԵՐԵՆ.

(Տես յ'էջ 261)

ԳՈՐԾԱՏՈՒՆՔ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԱՆՈՑՔ. — Ճշդիւ խօսելով գաւառիս մէջ բուն ասոնցմէ մին այլ չկայ, այլ եղած խեղճ բանն ալ՝ իբր հետեւութիւն կամ նմանութիւն մի պէտք է համարել անոնց, բայց ներկայիս գործատանց և արուեստանոցաց բնաւ չեն նմանիր՝ ոչ շէնքը, ոչ միջի գործիներ և ոչ այս կամ

1. Մկրտագիրքն 4րդ դէ. 4, Aprile, 1622. Francesco e Matteo Antonio, fio di Ser Iseppo, q.m Antonio Armeni, Marangon, et di Chiara, jugali. Stà in Calle delle Colonne. Compare il Ser P'ietro q.m Domenico, Proto de' Marangoni. P. Massi Curato.

2. Settem. 1653. Messer Francesco q.m Iseppo Armeno, Marangon d'Arse-
nal, d'anni 33 in circa; da febre continua già giorno 8. Li medici Leonardi et Bartoldi. Fà sepelir Madonna Andreana sua consorte. Stà in Casa Sabi-
nelli, in S. Iseppo.